ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՇՎԱՊԱՀՆԵՐԻ ԵՎ ԱՌԻԴԻՏՈՐՆԵՐԻ ԱՍՈՑԻԱՑԻԱ
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

ԴԱՍԸՆԹԱՑ 2.1

ԻՐԱՎԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐ

/քննության հարցեր/

Մարտ 2020թ.

Բաժին Ա

Բազմակի ընտրության 25 հարց, յուրաքանչյուր հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 2 միավոր:

1. **Փակ բաժնետիրական ընկերության բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք ունեն՝**

   ա/ միայն փակ բաժնետիրական ընկերության այլ բաժնետերերը.

   բ/ միայն փակ բաժնետիրական ընկերությունը.

   գ/ փակ բաժնետիրական ընկերության այլ բաժնետերերը, իսկ եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում բաժնետերերից որևէ մեկը չի օգտվում իր նախապատվության իրավունքից, ապա բաժնետիրական ընկերությունն իրավունք ունի այդ բաժնետոմսերը ձեռք բերել սեփականատիրոջ հետ համաձայնեցված գնով.

   դ/ փակ բաժնետիրական ընկերության այլ բաժնետերերը, իսկ եթե ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետում բաժնետերերից որևէ մեկը չի օգտվում իր նախապատվության իրավունքից, ապա ցանկացած երրորդ անձինք.

2. **Սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության մասնակիցների թիվը չպետք է գերազանցի 49-ը: Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ հակառակ դեպքում այն մեկ տարվա ընթացքում վերակազմավորվում է՝**

   ա/ բաց կամ փակ բաժնետիրական ընկերության.

   բ/ բաց բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի.

   գ/ փակ բաժնետիրական ընկերության կամ առևտրային կոոպերատիվի.

   դ/ հասարակական կազմակերպության.

3. **Իրավաբանական անձի լուծարման դեպքում առաջին հերթին բավարարվում են՝**

   ա/ լուծարվող իրավաբանական անձի գույքի գրավով ապահովված պարտավորություններով պարտատերերի պահանջները.

   բ/ պետական բյուջե կատարվող պարտադիր վճարների պարտքերը.

   գ/ աշխատանքային պայմանագրով աշխատող անձանց արձակման նպաստների, աշխատավարձի և հեղինակային պայմանագրերով վարձատրությունը.

   դ/ ստորադաս փոխառություններով պարտատերերի պահանջները.

4. **Ստորև թվարկվածներից ո՞րը քաղաքացիական իրավունքի օբյեկտ չէ.**

   ա/ գույքը՝ ներառյալ դրամական միջոցները, արժեթղթերը և գույքային իրավունքները.

   բ/ տեղեկատվությունը.

   գ/ ոչ նյութական բարիքները.

   դ/ դեպքերն ու իրադարձությունները.

5. **Տեղեկատվությունը ծառայողական, առևտրային կամ բանկային գաղտնիք է համարվում, եթե՝**

ա/ այն երրորդ անձանց անհայտ լինելու ուժով ունի իրական կամ հնարավոր առևտրային արժեք, չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն և տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար.

բ/ այն երրորդ անձանց հայտնի չէ և ունի հնարավոր առևտրային արժեք ու չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն.

գ/ այն երրորդ անձանց հայտնի չէ և ունի բացառապես իրական առևտրային արժեք ու չկա օրինական հիմքերով այն ազատորեն ստանալու հնարավորություն.

դ/ այն երրորդ անձանց հայտնի չէ, բայց վերջիններս կարող են օրինական հիմքերով այն ազատորեն ստանալ, իսկ տեղեկատվություն ունեցողը միջոցներ է ձեռնարկում դրա գաղտնիության պահպանման համար.

6. **Անշարժ գույքի նկատմամբ ձեռքբերման վաղեմություն ուժով սեփականության իրավունքը կարող է ծագել, եթե՝**

ա/ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, այն տիրապետում է հինգ տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ.

բ/ քաղաքացին, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, այն տիրապետում է յոթ տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ՝ որպես սեփական գույք.

գ/ քաղաքացին կամ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, այն տիրապետում է տասը տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ՝ որպես սեփական գույք.

դ/ իրավաբանական անձը, որն անշարժ գույքի սեփականատեր չէ, այն տիրապետում է քսան տարվա ընթացքում բարեխղճորեն, բացահայտ և անընդմեջ՝ որպես սեփական գույք.

7. **Ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի՝ ո՞ր դեպքերում բաժնային սեփականության ներքո գտնվող գույքի առանձնացող սեփականատերը կարող է մյուս մասնակիցներից պահանջել վճարել իր բաժնի արժեքը.**

ա/ եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ մյուս մասնակիցների հետ կնքված պայմանագրով.

բ/ եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու.

գ/ եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում մյուս մասնակիցների հետ կնքված պայմանագրով կամ դա անհնար է առանց ընդհանուր սեփականության ներքո գտնվող գույքին անհամաչափ վնաս պատճառելու.

դ/ եթե բաժինը բնեղենով առանձնացնելը չի թույլատրվում օրենքով կամ առանձնացող սեփականատիրոջ բաժինն աննշան է.

8. Եթե գույքը հատուցմամբ ձեռք է բերվել այդ գույքն օտարելու իրավունք չունեցող անձից, որի մասին ձեռք բերողը չգիտեր և չէր կարող իմանալ (բարեխիղճ ձեռք բերող), ապա սեփականատերն իրավունք ունի՝

ա/ ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն դեպքում, երբ գույքը կորցրել է սեփականատերը կամ այն անձը, ում այդ գույքի սեփականատերը հանձնել է տիրապետման, կամ այն հափշտակվել է մեկից կամ մյուսից, կամ նրանց տիրապետումից դուրս է եկել այլ ճանապարհով՝ անկախ նրանց կամքից.

բ/ բոլոր դեպքերում հետ պահանջել այդ գույքը.

գ/ սեփականատերն իրավունք չունի հետ պահանջել այդ գույքը.

դ/ ձեռք բերողից տվյալ գույքը պահանջել միայն այն բացառիկ դեպքում, երբ գույքը հափշտակվել է իրենից.

9. Ստորև թվարկված պնդումներից ո՞րն է ճիշտ.

ա/ իրավաբանական անձանց՝ միմյանց միջև և քաղաքացիների հետ գործարքները պետք է կնքվեն գրավոր ձևով՝ նոտարական վավերացմամբ.

բ/ քաղաքացիների միջև աշխատավարձի սահմանված նվազագույն չափի հարյուրապատիկ գումարը գերազանցող գործարքները պետք է կնքվեն գրավոր ձևով՝ նոտարական վավերացմամբ.

գ/ բոլոր գործարքները պետք է կնքվեն միայն հասարակ գրավոր ձևով.

դ/ քաղաքացիների միջև աշխատավարձի սահմանված նվազագույն չափի քսանապատիկ գումարը գերազանցող գործարքները պետք է կնքվեն հասարակ գրավոր ձևով.

10. Կեղծ՝ առոչինչ է համարվում այն գործարքը, որը՝

ա/ չի համապատասխանում օրենքի կամ այլ իրավական ակտերի պահանջներին.

բ/ կնքվել է մեկ այլ գործարքի քողարկման նպատակով.

գ/ կնքվել է գործունակ, սակայն գործարքի կնքման պահին այնպիսի վիճակում գտնվող անձի հետ, որն ընդունակ չի եղել հասկանալու իր գործողությունների նշանակությունը կամ ղեկավարելու դրանք.

դ/ կնքվել է առերևույթ, առանց համապատասխան իրավական հետևանքներ առաջացնելու մտադրության.

11. Համապարտ պարտականությունը պարտապաններից մեկի կողմից լրիվ կատարվելու դեպքում մնացած պարտապաններին՝

ա/ չի ազատում պարտատիրոջ հանդեպ պարտականությունը կատարելուց.

բ/ ազատում է պարտատիրոջ հանդեպ պարտականությունը կատարելուց.

գ/ մասնակիորեն է ազատում պարտատիրոջ հանդեպ պարտականությունը կատարելուց.

դ/ չի ազատում պարտատիրոջ հանդեպ պարտականությունը կատարելուց, բացառությամբ պայմանագրով այլ բան նախատեսված լինելու դեպքի.

12. Եթե պարտապանը գրավոր չի տեղեկացվել պարտատիրոջ իրավունքներն այլ անձի անցնելու մասին (պահանջի զիջում), ապա.

ա/ նախկին պարտատերը կրում է իր համար դրանից բխող անբարենպաստ հետևանքների ռիսկը.

բ/ բոլոր դեպքում պարտապանն է կրում է իր համար դրանից բխող անբարենպաստ հետևանքների ռիսկը

գ/ նոր պարտատերը կրում է իր համար դրանից բխող անբարենպաստ հետևանքների ռիսկը. ընդ որում, այդ դեպքում պարտավորության կատարումն սկզբնական պարտատիրոջը համարվում է կատարված պատշաճ պարտատիրոջը.

դ/ նախկին պարտատերը կրում է իր համար դրանից բխող անբարենպաստ հետևանքների ռիսկը, բացառությամբ եթե պարտապանին չտեղեկացնելը արտակարգ և անկանխելի հանգամանքների հետևանքով է.

13. Կողմը կարող է պայմանագրի փոփոխման կամ լուծման մասին պահանջը դատարան ներկայացնել՝

ա/ միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ երեսնօրյա ժամկետում.

բ/ բոլոր դեպքերում.

գ/ միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց հետո.

դ/ միայն պայմանագրի փոփոխման կամ լուծման առաջարկի վերաբերյալ մյուս կողմի մերժումն ստանալուց կամ այդ առաջարկում նշված ժամկետում պատասխանը չստանալուց հետո, իսկ դրա բացակայության դեպքում՝ եռամյա ժամկետում.

14. Եթե այլ բան նախատեսված չէ առուվաճառքի պայմանագրով կամ գործարար շրջանառության սովորույթներով, ապա ճանապարհին գտնվող ապրանքի վաճառքի դեպքում դրա պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը՝

ա/ առուվաճառքի պայմանագիրը կնքելու պահից կրում է վաճառողը մինչև ապրանքը գնորդի տիրապետմանն անցնելը.

բ/ առուվաճառքի պայմանագիրը կնքելու պահից անցնում է գնորդին, բացառությամբ եթե վաճառողը գնորդին է մատակարարել անորակ ապրանք.

գ/ առուվաճառքի պայմանագիրը կնքելու պահից չի անցնում գնորդին մինչև վաճառողը ապրանքը չհանձնի գնորդին.

դ/ առուվաճառքի պայմանագիրը կնքելու պահից անցնում է գնորդին.

15. Վարձատուի կողմից հիմնական վերանորոգում կատարելու պարտականությունը խախտելու դեպքում, ըստ ՀՀ քաղաքացիական օրենսգրքի, ստորև թվարկված իրավունքներից ո՞րը չունի վարձակալը.

ա/ կատարել պայմանագրով նախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ ծագած հիմնական վերանորոգում և վարձակալից պահանջել վերանորոգման արժեքը կամ դա հաշվարկել վարձավճարի հաշվին.

բ/ կատարել պայմանագրով չնախատեսված կամ անհետաձգելի անհրաժեշտությամբ չծագած հիմնական վերանորոգումը և վարձակալից պահանջել վերանորոգման արժեքը հաշվարկել հետագա բոլոր վարձավճարների հաշվին.

գ/ պահանջել համապատասխան չափով նվազեցնելու վարձավճարը.

դ/ պահանջել լուծելու պայմանագիրը և հատուցելու վնասները.

16. Հանձնարարության պայմանագրով ո՞ր դեպքում հանձնակատարը (այն անձը, որը կատարում է հանձնարարությունը) իրավունք ունի շեղվել հանձնարարողի ցուցումներից.

ա/ միայն այն դեպքում, երբ դա նախատեսված է հանձնարարության պայմանագրով.

բ/ այն դեպքում, երբ գործի հանգամանքներով դա անհրաժեշտ է ի շահ հանձնարարողի և նախատեսված է հանձնարարության պայմանագրով.

գ/ այն դեպքում, երբ գործի հանգամանքներով դա անհրաժեշտ է ի շահ հանձնարարողի, և հանձնակատարը չի կարողացել նախապես հարցում անել հանձնարարողին կամ ողջամիտ ժամկետում չի ստացել իր հարցման պատասխանը.

դ/ ոչ մի դեպքում.

17. Բանկային ավանդի պայմանագրով քաղաքացիների ավանդների վերադարձն այն բանկի կողմից, որի կանոնադրական կապիտալում բաժնետոմսերի կամ բաժնեմասերի հիսուն տոկոսից ավելին պատկանում է Հայաստանի Հանրապետությանը կամ համայնքներին երաշխավորվում է նաև վերջիններիս՝

ա/ սուբսիդիար պատասխանատվությամբ.

բ/ համապարտ պատասխանատվությամբ.

գ/ գույքային պատասխանատվությամբ.

դ/ լիակատար պատասխանատվությամբ.

18. Գրավի պայմանագրում պետք է նշվեն՝

ա/ կողմերի անունները (անվանումները), գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության էությունը և չափը.

բ/ կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության էությունը, չափն ու կատարման ժամկետը.

գ/ կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), գրավի առարկան և պայմանագրով ապահովված պարտավորության կատարման ժամկետը.

դ/ կողմերի անունները (անվանումները) և բնակության վայրերը (գտնվելու վայրերը), գրավի առարկան, գրավով ապահովված պարտավորության չափն ու գրավի առարկայի գնահատված արժեքը.

19. Իրավաբանական անձը կամ քաղաքացին իր աշխատողի կողմից պատճառված վնասը՝

ա/ բոլոր դեպքերում չի հատուցում, եթե այլ բան նախատեսված չէ կոլեկտիվ կամ անհատական աշխատանքային պայմանագրով.

բ/ բոլոր դեպքերում հատուցում է.

գ/ հատուցում է, եթե այն պատճառվել է աշխատողի կողմից աշխատանքային պարտականությունները կատարելիս և այդ հարցի շուրջ առկա է կողմերի փոխադարձ համաձայնությունը.

դ/ հատուցում է, եթե այն պատճառվել է աշխատողի կողմից աշխատանքային (ծառայողական, պաշտոնեական) պարտականությունները կատարելիս.

20. Եթե որոշակի ժամկետով կնքված աշխատանքային պայմանագրի գործողության ժամկետը լրանալուց հետո պայմանագիրը չի լուծվում ՀՀ աշխատանքային օրենսգրքով սահմանված կարգով, և աշխատանքային հարաբերությունները շարունակվում են, ապա՝

ա/ պայմանագիրը համարվում է կնքված անորոշ ժամկետով.

բ/ պայմանագիրը համարվում է կնքված միևնույն որոշակի ժամկետով.

գ/ պայմանագիրը չի համարվում կնքված, և եթե աշխատողը դեռ կատարում է իր աշխտանքային պարտականությունները, ապա իրավունք ունի ցանկացած պահի դադարեցնել աշխատանքը.

դ/ պայմանագիրը չի համարվում կնքված, և եթե աշխատողը դեռ կատարում է իր աշխտանքային պարտականությունները, ապա գործատուն իրավունք ունի ցանկացած պահի արգելել աշխատողին աշխատանքի ներկայանալը.

21. ՀՀ աշխատանքային օրենսգրքի համաձայն՝ աշխատողի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագիրը լուծելիս աշխատողն իրավունք ունի աշխատանքային պայմանագրի լուծման մասին ծանուցումը հետ վերցնելու ոչ ուշ, քան այն ներկայացվելու օրվանից հետո՝

ա/ մեկ աշխատանքային օրվա ընթացքում.

բ/ հինգ աշխատանքային օրվա ընթացքում.

գ/ երեք աշխատանքային օրվա ընթացքում.

դ/ յոթ աշխատանքային օրվա ընթացքում.

22. Ստորև թվարկվածներից ո՞ր դեպքում գործատուի նախաձեռնությամբ աշխատանքային պայմանագրի լուծումը չի արգելվում.

ա/ աշխատողի արձակուրդում գտնվելու ժամանակահատվածում.

բ/ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու դեպքում.

գ/ հղի կանանց հետ՝ հղիության մասին գործատուին տեղեկանք ներկայացնելու օրվանից մինչև հղիության և ծննդաբերության արձակուրդի ավարտման օրվանից հետո մեկ ամիսը լրանալը.

դ/ գործադուլ հայտարարելու մասին որոշումն ընդունելուց հետո և գործադուլի ընթացքում, եթե աշխատողն այդ գործադուլին մասնակցում է օրենքով սահմանված կարգով.

23. Մինչև կարգապահական տույժի կիրառումը գործատուն պետք է՝

ա/ աշխատողից գրավոր կերպով պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ.

բ/ աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով ողջամիտ ժամկետ.

գ/ աշխատողից պահանջի խախտման մասին բանավոր կամ գրավոր բացատրություն՝ տրամադրելով հնգօրյա ժամկետ.

դ/ աշխատողից պահանջի խախտման մասին գրավոր բացատրություն՝ տրամադրելով տասնօրյա ժամկետ.

24. Տնտեսական, տեխնոլոգիական, կազմակերպչական պատճառներով կամ գործատուի և աշխատողի հետագա աշխատանքային հարաբերությունների վերականգնման անհնարինության դեպքում դատարանը կարող է աշխատողին չվերականգնել իր նախկին աշխատանքում՝ պարտավորեցնելով գործատուին.

ա/ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև պարտավորության փաստացի կատարման օրը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի քառապատիկի չափով.

բ/ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան աշխատավարձի տասնապատիկի չափով.

գ/ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը.

դ/ հարկադիր պարապուրդի ամբողջ ժամանակահատվածի համար վճարել հատուցում՝ միջին աշխատավարձի չափով, մինչև դատարանի վճիռն օրինական ուժի մեջ մտնելը, և աշխատողին աշխատանքում չվերականգնելու դիմաց հատուցում՝ ոչ պակաս, քան միջին աշխատավարձի, բայց ոչ ավելի, քան միջին աշխատավարձի տասներկուապատիկի չափով.

25. Ներքոնշվածներից ո՞րը վարչական վարույթում չի բնորոշում առավելագույնի սկզբունքը.

ա/ վարչական մարմիններն իրավունք չունեն անձանցից պահանջել կատարելու այնպիսի գործողություններ, որոնք արդեն իսկ կատարվել են այդ անձանց կողմից այլ գործողությունների շրջանակներում կամ էլ իրենց բովանդակությամբ ներառվում են կամ կարող են ներառվել այդ շրջանակներում.

բ/ եթե անձանց կողմից վարչական մարմիններ ներկայացված փաստաթղթերը (տվյալները, տեղեկությունները) իրենց մեջ բովանդակային առումով ներառում են անհրաժեշտ այլ փաստաթղթերի բովանդակություն, ապա վերջիններս այլևս չեն կարող պահանջվել լրացուցիչ կամ առանձնացված ձևով.

գ/ արգելվում է անձանցից պահանջել իրենց ներկայացրած տվյալները, տեղեկությունները հավաստող փաստաթղթեր կամ լրացուցիչ տեղեկություններ, եթե այդ պահանջը սահմանված չէ օրենքով.

դ/ եթե վարչական մարմինների կողմից անձանց տրված թույլտվությունները բովանդակային առումով ներառում են այլ թույլտվություններ, ապա դրանք նույնպես համարվում են տրված։

Ընդամենը 50 միավոր

ԲԱԺԻՆ Բ. ԲՈԼՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ ՊԱՐՏԱԴԻՐ ԵՆ

Խնդիր 1 /12 միավոր/

«Ինվեստ Կապիտալ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ «Ընկերություն» կամ «Փոխառու») իր արտադրական գործունեության իրականացման համար անհրաժեշտ սարքավորումներ և սարքեր ձեռք բերելու նպատակով որոշում է համապատասխան ֆինանսական միջոցներ ներգրավել ՀՀ-ում գործող առևտրային բանկերից: Հաշվի առնելով, որ վերջիններիս կողմից տրամադրվելիք վարկերի տոկոսադրույքները բարձր են, ինչպես նաև այն, որ վարկային միջոցների տրամադրման համար Ընկերությունը կրելու է լրացուցիչ ֆինանսական պարտավորություններ (սպասարկման վճարների գանձում, տրամադրման վճարներ և այլ միջնորդավճարներ)՝ որոշում է կայացնում փոխառության պայմանագիր կնքել Ընկերության գլխավոր գործադիր տնօրեն Տ. Մազմանյանի մտերիմ ընկեր Ռ. Անդրեասյանին պատկանող «Վիժը» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ «Փոխատու») հետ: 2018 թվականի հունվարի 19-ին կողմերի միջև կնքվում է փոխառության պայմանագիր, որի էական պայմաններն են՝

- **Փոխառության գումար՝** առավելագույնը՝ 500.000 ԱՄՆ դոլար,
- **Փոխառության տոկոս՝** 7% տարեկան տոկոսադրույք,
- **Փոխառության վերադարձման (մարման) ժամկետը՝** մինչև 2020 թվականի հունվարի 9-ը՝ ամբողջությամբ,

Այլ էական պայմաններ՝

- ***Գրավի առկայություն:*** տրամադրված Փոխառության գումարի դիմաց գրավադրվում են Փոխառուին պատկանող երկու տրանսպորտային միջոցները և ՀՀ, ք. Երևան, Զովունի փողոց, թիվ 16 հասցեում գտնվող շինությունը:
- ***Գրավի առարկայի նկատմամբ բռնագանձում տարածելը:*** Փոխառության Պայմանագրով միաժամանակ սահմանվում է դրույթ առ այն, որ. *«Փոխառուի սույն պայմանագրից բխող պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու դեպքերում Փոխատուն իրավունք ունի Փոխառուին բռնագանձման ծանուցումը հանձնելուց հետո երկու ամսվա ընթացքում բռնագանձում տարածել և իրացնել գրավի բոլոր առարկաները: Ընդ որում՝ այն դեպքում, եթե բռնագանձման ծանուցումը ստանալուց հետո 15-օրյա ժամկետում Փոխառուն լրիվ կամ մասնակիորեն չի կատարում սույն պայմանագրից բխող պարտավորությունները, ապա վերջինս անվերապահորեն տալիս է իր համաձայնությունը, որ Փոխատուն իրավունք կունենա առանց դատարան դիմելու գրավի առարկաների նկատմամբ բռնագանձում տարածել քսան օրվա ընթացքում (այսինքն՝ մինչև երկամսյա ժամկետը լրանալը)»:*
- **Փոխառությունը մասնաբաժիններով տրամադրելը:** Կողմերը ձեռք են բերում համաձայնություն, որ Փոխառության գումարը կտրամադրվի թվով 5 մասնաբաժիններով՝ 100.000 ԱՄՆ դոլարի չափով Փոխառուի կողմից ներկայացված դիմումների հիման վրա:

Նույն օրը փոխառության պայմանագիրը նոտարական կարգով վավերացվում է[1]: Փոխառուի կողմից ներկայացված 4 հայտերի հիման վրա Փոխատուն տրամադրում է ընդհանուր 400.000 ԱՄՆ դոլարի չափով Փոխառության գումար:

[1] Պայմանագիրն իր էությամբ և բնույթով հանդիսանում է փոխառության պայմանագիր և ոչ թե վարկի պայմանագիր:

Սահմանված ժամկետում տրամադրված Փոխառության գումարը չվերադարձնելուց հետո՝ 2020 թվականի հունվարի 10-ին Փոխատուն գրավոր նամակ է ուղարկում Փոխառուին՝ խնդրելով հնարավորինս շուտ կատարել Փոխառության գումարի՝ այն է 500.000 ԱՄՆ դոլարի և դրա վրա հաշվեգրված տոկոսների վճարումը, այլապես վերջինս ստիպված կլինի դիմել իրավունքների պաշտպանության այլ միջոցների:

Պատասխան չստանալով՝ Փոխատուն 2020 թվականի հունվարի 15-ին ևս մեկ անգամ գրավոր ծանուցում է ուղարկում Փոխառուին՝ նշելով, որ Փոխառության Պայմանագրից բխող պարտավորությունները 15-օրյա ժամկետում չկատարելու դեպքում ինքը ստիպված կլինի նույն պայմանագրի համաձայն բռնագանձում տարածել գրավի առարկաների նկատմամբ:

2020 թվականի հունվարի 20-ի նամակով Փոխառուն հայտնում է, որ սկզբունքորեն չի ընդունում Փոխատուի նման գործելաոճը՝ նշելով, որ ինքը չի կրում 500.000 ԱՄՆ դոլար վերադարձնելու պարտավորություն այն պատճառով, որ փաստացիորեն հանձնված գումարը եղել է 400.000 ԱՄՆ դոլար, իսկ ինչ վերաբերում է գրավի առարկաների նկատմամբ արտադատական կարգով բռնագանձում տարածելուն, ապա Փոխառուն հայտնում է, որ այդ նպատակով ինքը պատրաստվում է դիմել իրավասու դատարան՝ իր խախտված իրավունքների վերականգնման պահանջով:

Հարց 1. Վերլուծեք կողմերի միջև առկա իրավահարաբերությունները: Արդյո՞ք Փոխատուի պահանջները և Փոխառուի ներկայացրած հակափաստարկներն իրավաչափ են: Եթե այո, ապա ինչու՞:

/6 միավոր /

Հարց 2. Բնութագրեք գրավի առարկայի նկատմամբ դատական և արտադատական կարգով բռնագանձում տարածելու ու իրացնելու կարգը, առանձնահատկությունները՝ ՀՀ քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգավորումների համատեքստում: Ներկայացրեք փոխառության և վարկային պայմանագրերի հիմնական առանձնահատկությունները:

/6 միավոր/

Խնդիր 2. /10 միավոր/

«Էլիտ Մայնինգ» ՓԲԸ-ն (այսուհետ նաև՝ «Ընկերություն») հանքարդյունաբերության ոլորտում բազմամյա փորձ ունեցող ընկերություններից է, որն զբաղվում է պղնձի և մոլիբդենի արդյունահանմամբ՝ գործունեությունն իրականացնելով ՀՀ Տավուշի մարզում: Ընկերությունն ունի մոտ 140 աշխատակից, որոնցից 80-ը աշխատում են Ընկերության կառավարման կենտրոնում՝ վերահսկողություն իրականացնելով վերջինիս պատկանող փակ հանքում կատարվող գործունեության անվտանգության և արդյունավետության նկատմամբ, իսկ մնացածը՝ անմիջականորեն մասնակցում են նույն հանքում իրականացվող աշխատանքներին:

2019 թվականի մարտի 17-ին գրանցված 9 բալանոց երկրաշարժի հետևանքով Ընկերությանը պատկանող և ՀՀ Տավուշի մարզի Օձուն գյուղում գտնվող փակ հանքում զոհվում են 4 աշխատակիցներ, ովքեր փլուզումների պահին օգտակար հանածոյի արդյունահանման աշխատանքներն իրականացնելիս գտնվել են փակ հանքում: Վերոգրյալ պատահարից հետո մի քանի օր անց 2019 թվականի ապրիլի 4-ին կատարված նախնական հետազոտությունների արդյունքում հայտնի է դառնում, որ երկրաշարժի հետևանքով փակ հանքի հետագա շահագործումը կյանքի և առողջության համար վտանգավոր է և աննպատակահարմար, ուստիև հարցի հրատապ լուծման համար որոշվում է հրավիրել Ընկերության բաժնետերերի արտահերթ ժողով՝ հանքարդյունաբերության ոլորտում հետագա գործունեության իրականացման նպատակահարմարության որոշման վերաբերյալ:

2019 թվականի ապրիլի 15-ին տեղի ունեցած բաժնետերերի ընդհանուր ժողովի ընթացքում բաժնետերերը որոշում են անորոշ ժամկետով կասեցնել ՀՀ Տավուշի մարզի Օձուն գյուղում գտնվող փակ հանքի շահագործումը և լուծել փակ հանքում աշխատող անձանց հետ կնքված բոլոր աշխատանքային պայմանագրերը, ուստիև Ընկերության տնօրենին հանձնարարվում է ձեռնարկել բաժնետերերի որոշումից բխող անհրաժեշտ բոլոր գործողությունները:

Ընկերության տնօրենը, հաշվի առնելով փակ հանքում աշխատակիցների անվտանգությունն ապահովելու անհրաժեշտությունը և օրըստօրե ահագնացող սպառնալիքները, թվով 60 աշխատակիցներին ուղարկում է ծանուցումներ, որոնց համաձայն՝ 2019 թվականի մայիսի 1-ից լուծված է համարում բոլոր աշխատակիցների հետ կնքված պայմանագրերը՝ վերջիններիս հետ կատարելով համապատասխան վերջնահաշվարկները՝ հաշվի առնելով այն, որ հանքում հետագա աշխատանքների իրականացումը աշխատակիցների համար դարձել է վտանգավոր, ուստիև անհնար է աշխատանքի պատշաճ պայմանների կազմակերպումը:

Մի շարք աշխատակիցներ դժգոհ լինելով Ընկերության ապօրինի գործողություններից՝ որոշում են արգելափակել դեպի հանք տանող բոլոր ճանապարհները, ինչի արդյունքում Ընկերությունը զրկվում է իրեն պատկանող սարքավորումները և սարքերը փակ հանքից դուրս բերելու հնարավորությունից: Ընկերության որոշ աշխատակիցներ, ապօրինի համարելով Ընկերության գործողությունները, դիմում են իրավասու դատարաններ՝ խախտված իրավունքների վերականգնման նպատակով:

Հարց 1. Վերլուծեք Ընկերության գործողությունների իրավաչափությունը ՀՀ աշխատանքային օրենսգրքով ամրագրված պահանջների համապատասխանության տեսանկյունից: Արդյո՞ք Ընկերության գործողություններում առկա են խախտումներ, թե՝ ոչ: Եթե առկա են, ապա ինչպիսի՞ն են դրանք:

/5 միավոր/

Հարց 2. Թվարկեք ՀՀ աշխատանքային օրենսգրքով աշխատանքային պայմանագրի լուծման հիմքերը: Ինչպիսի՞ կարգով և ժամկետներում է իրականացվում աշխատանքային պայմանագրի լուծումը՝ ըստ գործող կարգավորումների: **/5 միավոր/**

Խնդիր 3. /10 միավոր/

Երևանի Բաշինջաղյան փողոցի թիվ 15/7 հասցեում գտնվող բնակելի շինությունը (այսուհետ նաև՝ Շինություն) ընդհանուր բաժնային սեփականության իրավունքով (հավասար բաժիններով) պատկանում է հինգ եղբայրներին՝ Պողոսին, Պետրոսին, Մարտիրոսին, Գագիկին և Ղուկասին:

Հաշվի առնելով, որ Պողոսը, Պետրոսը և Մարտիրոսը փաստացիորեն չեն բնակվում ՀՀ-ում՝ վերջիններս որոշում են կայացնում իրենց բաժինները վաճառելու մտադրության վերաբերյալ տեղեկացնել մյուս եղբայրներին:

Այդ նպատակով 2019 թվականի նոյեմբերի 14-ին ներկայացված ծանուցմամբ ընդհանուր բաժնային սեփականության մասնակիցներ՝ Պողոսը, Պետրոսը և Մարտիրոսը հայտնում են իրենց պատկանող բաժեմասերը վաճառելու մտադրության մասին՝ յուրաքանչյուր բաժնեմասի համար որպես վաճառքի գին սահմանելով 14.000.000 ՀՀ դրամը: Միևնույն ծանուցմամբ, սահմանվում է, որ հաշվի առնելով Շինության՝ ՀՀ քաղաքաշինական նորմերի տեսանկյունից սեյսմակայունության որոշակի խնդիրներ ունենալու հանգամանքը՝ հնարավոր գնորդից պահանջվում է իր հաշվին իրականացնել Շինության փորձաքննություն և դրա արդյունքների ի հայտ գալուց հետո 7 ամսվա ընթացքում իրականացնել Շինության կապիտալ վերանորոգում: Վերոգրյալ պայմանը նախատեսելով՝ եղբայրները ցանկանում են հնարավորինս նվազեցնել հետագայում գնորդի կողմից Շինության որակի հետ կապված առարկությունների ներկայացումը:

Ի պատասխան վերը նշված ծանուցման՝ եղբայրներից Ղուկասը 2019 թվականի նոյեմբերի 20-ին ներկայացված պատասխան գրությամբ հայտնում է, որի ինքն արդեն իսկ 2019 թվականի հունիսի 6-ին կայացված հրապարակային սակարկություններով (աճուրդով) վաճառել է իր բաժնեմասը, ուստիև խնդրում է համապատասխան ծանուցումը ուղարկել նոր բաժնային սեփականատիրոջը՝ Զոհրակին:

Եղբայրները, վրդովված լինելով Ղուկասի գործողություններից, պահանջում են վերջինիցս անհապաղ քայլեր ձեռնարկել բաժնեմասի նկատմամբ սեփականության իրավունքը վերականգնելու ուղղությամբ, հակառակ դեպքում իրենք կդիմեն դատարան Ղուկասի և Զոհրակի միջև կնքված բաժնեմասի առուվաճառքի պայմանագիրն անվավեր ճանչելու պահանջով՝ հիմք ընդունելով այն, որ Շինության վաճառքն իրականացվել է առանց իրենց համաձայնության:

Ի պատասխան դրան՝ Ղուկասը նշում է, որ ինքը եղբայրներից համաձայնություն ստանալու որևէ պարտավորություն չի ունեցել՝ գործելով ՀՀ օրենսդրության սահմաններում և բարեխղճորեն:

Իր հերթին Գագիկը 2019 թվականի նոյեմբերի 25-ին ներկայացված նամակով հայտնում է, որ ինքը պատրաստ է գնել եղբայների բաժնեմասերը, սակայն ինչ վերաբերում է կապիտալ վերանորոգում կատարելու պարտականությանը, ապա ինքը չի պատրաստվում դա իրականացնել, քանի որ ՀՀ քաղաքաշինության կոմիտեի կողմից տրված եզրակացությամբ Շինությունը լիովին համապատասխանում է կառուցապատման բոլոր ստանդարտներին:

Կասկածի տակ դնելով Գագիկի ներկայացրած տեղեկատվության արժանահավատությունը՝ եղբայրները պնդում են, որ փորձաքննության հետ կապված պայմանն անվերապահորեն պետք է կատարվի, և մերժում են Գագիկի առաջարկը: Ստեղծված իրավիճակում Գագիկը որոշում է իր նախապատվության իրավունքը զիջել հարևան Անժելային այն պատճառով, որ ինքն այլևս հետաքրքրված չէ Շինությամբ և չի ցանկանում միջամտել եղբայրների գործողություններին:

Պողոսը, Պետրոսը և Մարտիրոսը միացյալ նամակով հայտնում են, որ անհրաժեշտ հակազդամիջոցներ կձեռնարկեն մյուս եղբայրների ապօրինի գործողությունների դեմ, որից հետո համապատասխան հայցադիմում են ներկայացնում իրավասու դատարան:

Հարց 1. Բնութագրեք եղբայրներից յուրաքանչյուրի գործողությունների իրավաչափությունը: Արդյո՞ք նրանց ներկայացրած պահանջները և առարկությունները իրավաչափ են, թե՝ ոչ: Բնութագրեք բաժնային սեփականության ներքո գտնվող գույքում բաժնեմասի վաճառքի կարգը և պայմանները:

/5 միավոր/

Հարց 2. Ներկայացրեք և թվարկեք սեփականության իրավունքի դադարման հիմքերը՝ ըստ ՀՀ քաղաքացիական օրենսդրության: Ընդհանուր առմամբ սեփականության իրավունքի դադարման ինչպիսի հիմքեր են նախատեսվում օրենսդրությամբ:

/5 միավոր/

Խնդիր 4. /8 միավոր/

2018 թվականի օգոստոսի 15-ին «Բիգ Էներջի» ՍՊԸ-ի (այսուհետ նաև՝ Գնորդ) և «Էքսպրես Էլեկտրոնիկ» ԲԲԸ-ի (այսուհետ նաև՝ Մատակարար) միջև կնքվել էր մատակարարման պայմանագիր, որով Մատակարարը պարտավորվել էր ամսական պարբերականությամբ մինչև 2019 թվականի դեկտեմբերի 15-ը Գնորդին փոխանցել իր կողմից արտադրված էլեկտրական սարքավորումներ (այսուհետ նաև՝ Ապրանքներ)։ Իր հերթին Գնորդը 2018 թվականի հոկտեմբերի 4-ին համապատասխան պայմանագրեր էր կնքել մեկ այլ՝ ՌԴ-ում գործող «Նանո-Դիվելըփմընթ» ՓԲԸ-ի (այսուհետ նաև՝ Պատվիրատուի) հետ, որոնցով պարտավորվել էր իր կողմից ձեռքբերված էլեկտրական սարքավորումները վաճառել վերջինիս՝ փոխադրման ծառայությունների մատուցման պայմանագրեր կնքելով մի շարք անձանց հետ։

2019 թվականի մայիսի 17-ին Մատակարարի արտադրամասում (վերջինիս աշխատակիցների անփութության պատճառով) տեղի է ունենում պայթյուն, ինչի հետևանքով վերջինս մինչև 2019 թվականի դեկտեմբերի 15-ը չի կատարում համապատասխան Ապրանքների մատակարարումները։ Արդյունքում, Գնորդը 2019 թվականի հունիսի 17-ին գրավոր նամակով դիմում է Մատակարարին՝ պարզելու, թե ինչ փուլում է գտնվում Ապրանքների մատակարարումը և հայտնում, որ Պատվիրատուն սպառնում է իր (Գնորդի) նկատմամբ կիրառել պատասխանատվության միջոցներ, մասնավորապես՝ գանձել տուժանքներ, ինչպես նաև լուծել համապատասխան պայմանագրերը։ 2019 թվականի հունիսի 18-ին ներկայացված պատասխանով Գնորդը հայտնում է, որ իր հետ պայմանագրային հարաբերությունների մեջ գտնվող Մատակարարի արտադրամասում տեղի է ունեցել պայթյուն, ինչի արդյունքում վերջինս չի կարողանում արտադրել և տրամադրել համապատասխան Ապրանքները։

2019 թվականի հունիսի 20-ին Պատվիրատուն նշում է, որ ինքը պատրաստ է ընդունելու այլ մատակարարի՝ նույն որակի և ստանդարտներին համապատասխանող ապրանքները և առաջարկում է փնտրել այլ մատակարարներ, որին, ի պատասխան, նույն օրը Գնորդը հայտարարում է, որ լրացուցիչ պարտավորություններ կրելու ֆինանսական միջոցներ և ռեսուրսներ չունի, ուստիև առաջարկում է Պատվիրատուին սպասել մինչև Մատակարարը կվերականգնի իր բնականոն գործունեությունը։

Գնորդի գործողությունների վերաբերյալ դժգոհություններ արտահայտելով՝ Պատվիրատուն Գնորդի նկատմամբ հաշվարկում է տույժեր և պահանջում խնդրին տալ հստակ լուծում։ Արդյունքում, հաշվեգրված տույժերի ընդհանուր չափը առ 2019 թվականի դեկտեմբերի 27-ի դրությամբ կազմում է մոտ 2.500.000 ՀՀ դրամ։ Ի պատասխան վերոգրյալ գործողությունների՝ Գնորդը, անվերապահորեն ընդունելով Պատվիրատուի հանդեպ ունեցած բոլոր վճարային պարտավորություններն ու դրանց կետանցման փաստը, այնուհանդերձ խնդրում է տրամադրել հավելյալ ժամանակ՝ խնդիրների շտկման նպատակով։

Վերոգրյալ նամակին պատասխան չստանալով՝ 2020 թվականի հունվարի 15-ին Պատվիրատուն սնանկության դիմում է ներկայացնում ՀՀ սնանկության դատարան՝ Գնորդին սնանկ ճանաչելու և իր պահանջների բավարարման նպատակով։

Հարց. Բնութագրեք կողմերից յուրաքանչյուրի գործողությունների իրավաչափությունը։ Արդյո՞ք կողմերի պահանջները բխում են գործող օրենսդրական կարգավորումների տրամաբանությունից։ Արդյո՞ք ստեղծված իրավիճակում կողմերը կարող են չկրել պատասխանատվություն։ Հիմնավորեք պատասխանը։

/8 միավոր/

Խնդիր 5. /10 միավոր/

Ավտոտրանսպորտային միջոց ձեռքբերելու ցանկություն ունեցող Կ. Կարապետյանը (այսուհետ՝ «Հաճախորդ») ներկայանում է «ԲԵՏԱ ԼԻԶԻՆԳ» ունիվերսալ վարկային կազմակերպություն (այսուհետ՝ «Վարկային Կազմակերպություն») և հայտնում, որ ինքը ցանկանում է ձեռք բերել 2019 թվականի արտադրության «BMW X6» մակնիշի ավտոմեքենա (այսուհետ՝ «Ավտոմեքենա»), սակայն բավարար ֆինանսական միջոցներ չունենալու պատճառով առաջարկում է Վարկային Կազմակերպությանը ֆինանսավորել իրեն՝ հետագայում ֆինանսավորման գումարները վերադարձնելու պայմանով:

Վարկային Կազմակերպության առաջարկով 2019 թվականի հունիսի 9-ին Հաճախորդի հետ կնքվում է ֆինանսական վարձակալության պայմանագիր (այսուհետ՝ «Լիզինգի Պայմանագիր»), որով Հաճախորդը պարտավորվում է ըստ սահմանված ժամանակացույցի առավելագույնը 72 ամսվա ընթացքում վճարելու Ավտոմեքենայի ընդհանուր գինը: Ընդ որում՝ Լիզինգի Պայմանագրով հստակ ամրագրվում է դրույթ առ այն, որ Վարկային Կազմակերպությունը պարտավորվում է, ըստ Հաճախորդի ցուցումի, Ավտոմեքենան գնել «Ֆաստ Մոթորս» ՍՊԸ-ից կամ «Մաստեր Քարս» ՓԲԸ-ից, սակայն վաճառողներից որևէ մեկի վերջնական ընտրությունը վերապահվում է Վարկային Կազմակերպությանը: Վերջինս 2019 թվականի հունիսի 26-ին համապատասխան առուվաճառքի պայմանագիր (այսուհետ նաև՝ «Առուվաճառքի Պայմանագիր») է կնքում «Մաստեր Քարս» ՓԲԸ-ի (այսուհետ՝ «Վաճառող») հետ՝ վերջինիս վճարելով Ավտոմեքենայի ընդհանուր արժեքը՝ 67.000.000 ՀՀ դրամի չափով: Ավտոմեքենան 2019 թվականի հունիսի 30-ին հանձնվում է Հաճախորդի փաստացի տիրապետմանը:

Հաճախորդը բիզնես կոնֆերանսի մասնակցելու նպատակով 2019 թվականի օգոստոսին ՀՀ Լոռու մարզի քաղաք Վանաձոր ուղևորվելիս արագության գերազանցման պատճառով վրաերթի է ենթարկում քաղաքացի Կ. Մանասյանին, ում պատճառվում է միջին ծանրության վնաս: Դեպքից անմիջապես հետո Հաճախորդը ստիպված է լինում Ավտոմեքենան տեղափոխել Հրազդան քաղաքում գտնվող արհեստանոց, որտեղ նրան հայտնում են, որ Ավտոմեքենայի շարժիչն ու արգելակման համակարգն ունեցել են բազմաթիվ գործարանային թերություններ (թերությունները հիմնավորվում են մի քանի մասնագետների մասնագիտական եզրակացություններով), իսկ Ավտոմեքենայի արգելակման համակարգը վթարի արդյունքում այնպես է վնասվել, որ այլևս պիտանի չէ օգտագործման համար, ուստիև համապատասխան թերությունների շտկման համար Հաճախորդից պահանջում են վճարել 10.000.000 ՀՀ դրամ: Հաճախորդը հայտնում է, որ Ավտոմեքենան ձեռք է բերել Վարկային Կազմակերպությունից և խնդրում է իրեն տրամադրել ժամանակ խնդրի լուծումը գտնելու համար:

2019 թվականի օգոստոսի 15-ին Հաճախորդը ներկայանում է Վարկային Կազմակերպություն և վերջինիս տնօրենին ներկայացնում իրավիճակը՝ կցելով մի շարք մասնագետների մասնագիտական եզրակացություններն ու հայտնում իր դժգոհությունը Վարկային Կազմակերպության ապօրինի անգործության վերաբերյալ: Հաճախորդը Վարկային կազմակերպությանը ներկայացնում է պահանջ՝ փոխարինելու անպատշաճ որակի Ավտոմեքենան պայմանագրին համապատասխանող որակի ավտոմեքենայով, ինչպես նաև հատուցելու Ավտոմեքենան սարքին վիճակի (այդ թվում՝ արգելակման համակարգի փոխարինման համար) բերելու համար իր կրած ծախսերը 10.000.000 ՀՀ դրամի չափով:

Վարկային Կազմակերպությունը հայտնում է, որ ինքը գերազանցապես զբաղվում է ֆինանսական միջոցների տրամադրմամբ և տվյալ պարագայում չուներ որևէ պարտականություն զննելու Ավտոմեքենայի սարքինությունն ու պատշաճությունը այն գնելիս, և խնդրում է ժամանակ ստեղծված իրավիճակը շտկելու համար: Բացի այդ, Հաճախորդն ինքը Վարկային

Կազմակերպությանը տրամադրել էր ցուցում՝ ընտրելու այն կազմակերպությունը, որից պետք է ձեռք բերվի ավտոմեքենան, այսինքն՝ ի սկզբանե Վարկային Կազմակերպությունը սահմանափակված է եղել Հաճախորդի ցուցումով:

Վարկային Կազմակերպությունը 2019 թվականի սեպտեմբերի 5-ին համապատասխան բողոքը՝ կից մասնագիտական եզրակացություններով, ուղարկում է Վաճառողին և պահանջում բացատրություն Ավտոմեքենայի հետ կապված թերությունների վերաբերյալ: Վաճառողը հայտնում է, որ ինքը հանդիսանում է BMW ընկերության պաշտոնական դիստրիբյուտորը, ունի Ավտոմեքենայի սերտիֆիկացման ու համապատասխանության բոլոր հավաստագրերը և և մերժում է Վարկային Կազմակերպության բոլոր պահանջները, ինչի մասին 2019 թվականի սեպտեմբերի 20-ին վերջինս հայտնում է Հաճախորդին:

Հաճախորդը 2019 թվականի հոկտեմբերի 1-ի պատասխան գրությամբ հայտնում է, որ ինքը համաձայն չէ Վարկային Կազմակերպության գործողությունների և դրսևորած անփութության համար, հետևաբար ինքը դիմելու է դատարան ստեղծված խնդրին լուծում տալու նպատակով: Իր պատասխանը Հաճախորդը հիմնավորում է այն հանգամանքով, որ Վարկային Կազմակերպությունը պարտավոր էր Ավտոմեքենան ձեռքբերելիս իրականացնել դրա պատշաճ ուսումնասիրություն և դրանից հետո միայն այդ Ավտոմեքենան հանձներ իրեն, իսկ ինչ վերաբերում է Վարկային Կազմակերպության այն պնդմանը, թե նա զբաղված է միայն ֆինանսավորմամբ, ապա Հաճախորդը համարում է այն անհիմն, քանի որ Վարկային Կազմակերպությանը տրամադրվել է լիզինգի գործունեության իրականացման լիցենզիա, իսկ նման լիցենզիայի առկայությունը ենթադրում է ոչ միայն ֆինանսավորման տրամադրում, այլև լիզինգով տրամադրված ապրանքների առուվաճառքի պրոցեսի պատշաճ կազմակերպման պարտականություններ:

Իր հերթին քաղաքացի Կ. Մանասյանը առողջությանը պատճառված վնասի հատուցման հայց է ներկայացնում Հաճախորդի դեմ, ինչին ի պատասխան՝ վերջինս հայտարարում է, որ ինքը պատշաճ պատասխանող չէ, որևէ պատասխանատվություն չի կրում, քանի որ Ավտոմեքենայի անսարքությունները պայմանավորված են եղել Վարկային Կազմակերպության մեղքով, ուստիև Կ. Մանասյանը համապատասխան պահանջը պետք է ներկայացնի դրա դեմ:

Հարց 1. Իրավաչա՞փ են արդյոք Հաճախորդի բոլոր պահանջները, եթե այո, ապա ինչու՞: Արդյո՞ք Վարկային Կազմակերպությունը պետք է պատասխանատվություն կրի խնդրո առարկա պարագայում, եթե այո, ապա ինչու՞: Ինչպիսի՞ պահանջներ կարող են ներկայացվել Վաճառողին և ու՞մ կողմից

/5 միավոր/

Հարց 2. Իրավասու՞ է արդյոք Կ.Մանասյանը պահանջ ներկայացնել Հաճախորդի դեմ: Արդյո՞ք առկա իրավիճակում Հաճախորդը կազատվի պատասխանատվությունից, եթե ոչ, ապա ինչու՞: Արդյո՞ք առկա պարագայում Վարկային Կազմակերպությունը և/կամ Վաճառողը կարող են պատասխանատվություն կրել Կ. Մանասյանին պատճառված վնասի համար:

/5 միավոր/